



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**«Հերաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հերք»
թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին**
ք.Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 2021թ. հունվարի 25-ի գրությամբ տրված հարցադրումների և ի լրումն ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 22.01.2021թ. N 05/16/00274-2021 գրության՝ տեղեկացնում ենք, որ 2020թ. ընթացքում հավանության արժանացած Արմավիրի մարզի թվով 3 սուբվենցիայի ծրագրեր չեղարկվել են համայնքների ղեկավարների գրությունների հիման, մասնավորապես՝

1) Բագարան համայնքի խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում - ծրագիրը չի իրականացվել համայնքի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, ծրագրի նախագծանախահաշվային արժեքը՝ շուրջ 233.3 մլն դրամ, 2020թ. համար ծրագրի բյուջեն կազմել է 106.5 մլն դրամ, որից ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինը՝ 70%, համայնքի մասնաբաժինը՝ 30%:

2) Գրիբոյեդով համայնքի կենտրոնական այգու բարեկարգման և ոռոգման ցանցի կառուցում - ծրագիրը չի իրականացվել համայնքի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 22.4 մլն դրամ, որից ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինը՝ 30%, համայնքի մասնաբաժինը՝ 70%:

3) Եղեգնուտ համայնքի կենտրոնական, 1-ին, 3-րդ, 5-րդ փողոցների և միջփողոցային ճանապարհների ասֆալտապատում - 2020թ. ծրագիրը չի իրականացվել ժամկետային առումով և կդիտարկվի 2021 թվականին իրականացվելիք սուբվենցիայի ծրագրի շրջանակներում: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 174.6 մլն դրամ, որից ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինը՝ 45%, համայնքի մասնաբաժինը՝ 55%:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ թվով 1 ծրագիր՝ Հուշակերտ համայնքի ճանապարհների ընթացիկ նորոգում-ասֆալտապատում, մինչև գնահատման փուլը չեղարկվել է, քանի որ նախագծով նախատեսված է եղել միայն ընթացիկ (փոսային) նորոգում:


Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի 2020 թվականի սուբվենցիայի ծրագրերի մասին տեղեկատվության լրամշակված տարբերակը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Գլխավոր քարտուղար՝

Ա. Հովհաննիսյան

29.01.2021



VERIFIED OCSP 29.01.2021 14:32:32 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023